

5.7. Ստանդարտացում, չափազիտություն, սերտիֆիկացում

Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ամփոփ տեղեկատվության, 2003թ. հունվար-մարտին պետական գրանցում են ստացել արտադրանքի վերաբերյալ ՀՀ տեխնիկական 54 պայմաններ: Թողարկվել են 3 անուն տեղեկատվական նյութեր՝ ստանդարտների համացանկ, տեղեկատու, տեղեկատվական թերթիկներ:

Տրվել է համապատասխանության 974 սերտիֆիկատ, այդ թվում՝ ներմուծվող արտադրանքի համար՝ 771, արտահանվող արտադրանքի համար՝ 61, մնացած 142-ը՝ տրվել է Հայաստանում սերիական արտադրվող արտադրանքի համար: Մերժվել է արտադրանքի սերտիֆիկացման 4 հայտ, որից 1-ը՝ արտադրանքի անհամապատասխանության պատճառով:

Ստանդարտացման, չափազիտության, սերտիֆիկացման գործունեության հիմնական ցուցանիշները

	2003թ. հունվար-մարտ			
	ընդամենը	աճը կամ նվազումը 2000թ. հունվար-մարտի համեմատ (նվազումը «-» նշանով), %	աճը կամ նվազումը 2001թ. հունվար-մարտի համեմատ (նվազումը «-» նշանով), %	աճը կամ նվազումը 2002թ. հունվար-մարտի համեմատ (նվազումը «-» նշանով), %
Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների քանակը	54	- 57.1	- 39.3	17.4
Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը	3	- 25.0	- 40.0	0
Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը այդ թվում՝	974	- 50.2	- 22.5	- 14.4
ներմուծվող արտադրանքի համար	771	- 57.1	- 24.6	- 15.7
արտահանվող արտադրանքի համար	61	- 33.7	- 55.1	- 14.1
Վրտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը	4	- 89.5	- 20.0	0

2003թ. հունվար-մարտին անորակության պատճառով չի սերտիֆիկացվել ներմուծված Ռուսաստանի Դաշնության արտադրության 180 կգ մետաղյա տուփերով խտացրած կաթ: